— Որսորդ եղբայր, ես քեզի պէս հիւրը կը սիրեմ, որ իւր ընտիր կերակուրը մէկտեղ կը բերէ. քու կաքաւներդ ու լորամարգիդ այս գինին սեղան հրաւիրեցին, եթէ ոչ քացխած գինի շա՛տ:

— Իշխանաց արժանի գինի է, ես այսպիսի գինի անգամ մ’էլ հանդիպած եմ Տարոնոյ մէջ, համը դեռ բերանս է. Բագրատունեաց Մշոյ կարասներէն տիկս չցուցի, ո՛վ գիտէ քանի տարուայ գինի էր:

— Աս գինին էլ նորա խնամին է, որսորդ եղբայր, Արծրունեաց ապրանք է, Դերենիկ իշխանը ինձ յուղարկեց… անցեալ տարի… ոչ… առաջին տարի… միտքս չէ հիմա:

— Դու մեծ մարդկանց հետ գործ ունիս, հայր սուրբ, քու վանքդ պէտք էր նորէ նոր շինէին այդ մեծ իշխանները:

— Այն էլ կարելի է, խելօք մարդը պարագայներէ օգուտ քաղել դիանալու է: Ս. Կարապետ գնացել ես, որսորդ եղբայր, այնպէ՞ս չէ, ի՞նչ աբեղայներ կան այնտեղ, որ խոտաճարակ կապրին. ես այդ կեանքը կը ճանչեմ, ես էլ այնպէս կը մնայի թէ որ արթուն չլինէի… ինչ որ է, այսչափ միայն յաջողեցաւ, եթէ քիչ մը ժամանակ տեւէր, ես եպիսկոպոս եղած էի:

— Քու եպիսկոպոսութեանդ յաջողելո՛ւն,— ըսաւ Վահրիճ եւ բաժակը պարպեց:

— Քու միշտ յաջո՛ղ որսորդութեանդ,— պատասխանեց հայր սուրբը ետ չի կենալով.— բայց քանի անգամ է, որ եպիսկոպոսութիւն կը մօտենա, հա բռնեցի, կ'ըսեմ՝ դարձեալ ձեռացս կը փախչի:

— Այսչափ դժա՞ր բան է եպիսկոպոսանալը:

— Ի՞նչ, դիւրին բան գիտցա՞ր, բայց դարձեալ քանի անգամ դիւրացաւ. ես որ մէկ քանի ամիս այս Դերենիկի հօր Աշոտ իշխանին ատենադպիրն էի. նա գերի գնաց… մնաց, միայն այս աւերակ վանքը ձեռք բերի վերջը, այս Դերենիկն ինձ խօսք տուաւ, որ գիս